

ՀԵՂՈՒԿ ՕՃԱՌ «ՅՈՒՆԻՏ-ԴԵՐՄ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Հեղուկ օճառ «ՅՈՒՆԻՏ-ԴԵՐՄ» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի
2020թ. նոյեմբերի 05-ի
3895 - Լ հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

ՀԵՂՈՒԿ ՕՃԱՌ «ՅՈՒՆԻՏ-ԴԵՐՄ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հեղուկ օճառ «Յունիտ-Դերմ» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է անգույնից մինչև բաց դեղնավուն գույնի, անհոտ կամ բուրանյութի հոտով, գործածության համար պատրաստի կիսաթափանցիկ կամ թափանցիկ գելանման հեղուկ: Որպես ազդող նյութ պարունակում է տրիկլոզան՝ 0,3%, անիոնային և ամֆոտերային մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), ինչպես նաև բաղադրիչներ նախատեսված ձեռքերի խնամքի համար փափկեցնող, կոնդենսացնող հավելումներ, ջուր: Միջոցի pH – $6,0 \pm 1,0$:

2. Միջոցը թողարկվում է պոլիմերային տարաներով՝ ամուր պտտվող կափարիչներով կամ ցողացրիչ ծայրադիրներով՝ 0,1-ից մինչև 2 դմ³ ծավալներով, պոլիմերային տարաներով պտտվող կափարիչներով՝ 3 դմ³-ից մինչև 200 դմ³ ծավալներով կամ այլ տարաներով՝ սպառողների և նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Միջոցի պիտանելիության ժամկետը 5 տարի է՝ գործարանային փաթեթավորման չբացման (այդ թվում նաև բացման), փաթեթավորման հերմետիկության և միջոցի պահման պահանջների պահպանման դեպքում:

3. Միջոցի կենսաբանական ակտիվությունը՝ միջոցն օժտված է մանրէասպան՝ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ և սնկասպան հատկություններով: Միջոցն օժտված է երկարատև՝ մինչև երեք ժամ պահպանվող հակամանրէային հատկությամբ:

4. Թունաբանական ցուցանիշներ՝ ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՕՍՏ 12.1.007-76-ին համապատասխան, միջոցը պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին՝ ստամոքսի մեջ ներմուծվելիս և մաշկի վրա ներգործությամբ: Մաշկի անմիջական շփման դեպքում միջոցը չունի սենսիբիլիզացնող, մաշկային և տեղային գրգռող ազդեցություն, ունի թույլ գրգռիչ ազդեցություն աչքերի լորձաթաղանթների վրա: ՉԱՄ-ի սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԿ) աշխատանքային գոտու օդում՝ 1մգ/մ³ է, վտանգավորության 2 դաս (աէրոզոլ) :

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

5. Միջոցը նախատեսված է՝

1) բժշկական անձնակազմի ձեռքերի լվացման և հիգիենիկ մշակման համար բոլոր տեսակի և մակարդակների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն՝ հիվանդանոց, պոլիկլինիկա, առողջարան, վերականգնողական կենտրոն, ցերեկային ստացիոնար, բուժսանմաս և բուժկետ, դիսպանսեր, հոսպիտալ, ատամնաբուժական կաբինետ, նորածնային բաժանմունք, ծննդաբերական ստացիոնար, նորածինների պալատ, ԷԿՈ-կլինիկաներ, ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունքներ, վնասվածքաբանության, այրվածքաբանության բաժանմունքներ, բժշկական մասնագիտացված կենտրոններ),

2) Վիրաբույժների, վիրահատող բժշկական անձնակազմի ձեռքերի լվացման և հիգիենիկ մշակման նպատակով՝ հակասեպտիկով մշակումից առաջ, շտապ օգնության բժշկական անձնակազմ, արյան փոխներարկման կայաններ, լաբորատորիաների (այդ թվում մանրէաբանական, իմունաբանական, կլինիկական և այլն), ախտահանման կայանների և սանթոդարանների աշխատակիցների շրջանում,

3) ձեռքերի հիգիենիկ և մաշկի ծածկույթի սանիտարական մշակման նպատակով՝ սանթոդարաններում և բժշկական կազմակերպություններում (հիվանդանոց, պոլիկլինիկա, վերականգնողական կենտրոն, ցերեկային ստացիոնար, բուժսանմաս և բուժկետ, բժշկական և բժշկամանկաբարձական կետ, դիսպանսեր, հոսպիտալ, ատամնաբուժական կաբինետ, ծննդաբերական ստացիոնար, նորածինների պալատ, ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունք, վնասվածքաբանության, այրվածքաբանության բաժանմունք, օրգանների փոխպատվաստման կենտրոն,

բժշկական մասնագիտացված կենտրոն, արյան փոխներարկման կենտրոն և շտապ օգնության կայան, կլինիկական, մանրէաբանական, իմունաբանական և այլ լաբորատորիաներ, առողջարաններ, ծերերի և հաշմանդամների տներ),

4) լաբորատորիաների անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակման նպատակով,

5) հանրային սննդի, արդյունաբերական հաստատությունների, այդ թվում սննդի արտադրության աշխատակիցների ձեռքերի հիգիենիկ մշակում,

6) կոմունալ ծառայությունների, վաճառատների, հյուրանոցների, հանրակացարանների աշխատակիցների ձեռքերի հիգիենիկ մշակման նպատակով,

7) մանկական, ուսումնական հաստատությունների (մանկապարտեզներ, դպրոցներ, ԲՈՒՀ-եր) հատուկ լրացուցիչ կրթության (շտկող) հաստատություններում, երեխաների այլ հաստատություններում (մանկան տուն, մանկատներ, դպրոց-ինտերնատներ), մանկական առողջարանային հաստատություններ և այլն, ձեռքերի հիգիենիկ մշակման նպատակով,

8) ձեռքերի հիգիենիկ մշակում և մաշկի ծածկույթների սանիտարական մշակում սոցիալական ապահովման հաստատություններում (հոսպիսներ, պալիատիվ խնամքի բաժանմունքներ և հաստատություններ, բուժքույրական խնամքի բաժանմունքներ, տուն-ինտերնատներ ծերերի և հաշմանդամների համար և այլն), քրեակատարողական հաստատություններում,

9) ձեռքերի հիգիենիկ մշակում և մաշկի ծածկույթների սանիտարական մշակում վարսավիրանոցների, գեղեցկության սրահների, սոլյարիների, մատնահարդարման և ոտնահարդարման կոսմետոլոգիական կաբինետների, ֆիթնես և ՍՊԱ-սրահների աշխատակիցների և այցելուների շրջանում,

10) Սպորտային առողջարարական համալիրների (մարզադաշտեր, լողավազաններ, ֆիթնես սրահներ, շոգեբաղնիքներ և այլն) աշխատակիցների և այցելուների ձեռքերի հիգիենիկ մշակում,

11) հանրային և վարչական հաստատությունների (գրասենյակներ, ցուցասրահներ, կինոթատրոններ, թատրոններ, թանգարաններ, գրադարաններ, առևտրի կենտրոններ և այլն) աշխատակիցների և այցելուների ձեռքերի հիգիենիկ մշակում,

12) մաշկային ծածկույթների սանիտարական մշակում ուժային կառույցների գերատեսչություններում, այդ թվում ԱԻՆ փրկարարական ծառայություններում, ՊՆ անձնակազմի շրջանում,

13) ձեռքերի, մաշկային ծածկույթների և ոտնաթաթերի հիգիենիկ մշակում բնակչության կողմից կենցաղում՝ սնկային հիվանդությունների կանխարգելման նպատակով:

3. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

6. Ձեռքերի հիգիենիկ մշակում՝ խոնավ ձեռքերի վրա լցնում են 1,5 մլ միջոց, փրփրեցնում, մշակում ստացված փրփուրով 1 րոպեի ընթացքում և մանրակրկիտ լվանում հոսող ջրով: Մաշկը չորացնում են սրբիչով, մեկանգամյա անձեռոցիկով կամ օդի հոսքով:

7. Վիրաբույժների, վիրահատությունների մասնակից բժշկական անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակում՝ հակասեպտիկով մշակումից առաջ՝ իրականացվում է կրկնակի մշակում: 1,5 մլ միջոցը լցնում են խոնավ ձեռքերի վրա: Փրփրեցնում են (ձեռքերը, դաստակները, նախաբազուկները), ստացված փրփուրով մշակում 1 րոպեի ընթացքում, մանրակրկիտ լվանում հոսող ջրով: Ձեռքերը չորացնում են մանրէազերծ անձեռոցիկով, որից հետո մաշկի համար օգտագործում են հակասեպտիկ՝ վերջինիս կիրառման հրահանգի համաձայն:

8. Մաշկի ծածկույթի սանիտարական մշակում՝ անհրաժեշտ քանակի միջոցը լցնում են խոնավ սպունգի վրա կամ անմիջապես մաշկի վրա, ստացված փրփուրով մշակում մաշկի ծածկույթը (բացի գլխի մազածածկ հատվածներից)՝ կանխելով միջոցի թափանցումը աչքերի մեջ, ապա փրփուրը մանրակրկիտ լվանում ջրով: Մաշկը չորացնում են սրբիչով, մեկանգամյա անձեռոցիկով կամ օդի հոսքով:

9. Ոտնաթաթերի մշակում՝ ոտնաթաթերի խոնավ մակերեսներին լցնում են 1,5 մլ միջոց, մշակում ստացված փրփուրով 1 րոպեի ընթացքում, մանրակրկիտ լվանում հոսող ջրով:

10. Ձեռքերի, մաշկի ծածկույթների, ոտնաթաթերի հիգիենիկ մշակումը բնակչության կողմից կենցաղում իրականացվում է միանվագ: Ձեռքերի, դաստակների, նախաբազուկների, ոտնաթաթերի խոնավ մաշկի վրա լցվում է 1,5 մլ միջոց, լվանում ստացված փրփուրով 0,5-1 րոպեի ընթացքում և մանրակրկիտ լվանում հոսող ջրով:

Մաշկի ծածկույթները չորացվում են սրբիչով, մեկանգամյա անձեռոցիկով կամ օդի հոսքով:

4. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

11. Միջոցը կիրառվում է միայն արտաքին օգտագործման նպատակով, չի լցվում վերքերի և լորձաթաղանթների վրա: Խուսափում են աչքի մեջ թափանցելուց:
12. Միջոցի սառեցման դեպքում հալեցումն իրականացվում է սենյակային ջերմաստիճանում՝ առանց հարկադրական տաքացման: Օգտագործումից առաջ թափահարում են:
13. Միջոցի պիտանելիության ժամկետի ավարտից հետո չեն կիրառում:
14. Միջոցն առանց նոսրացման չեն թափում կոյուղու և ձկնային տնտեսությունների ջրամբարների մեջ:

5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

15. Աչքերի մեջ լցվելու դեպքում՝ աչքերը լվանում են հոսող ջրի տակ և կաթեցնում սուլֆացիլ նատրիումի 30% լուծույթ:
16. Միջոցը ստամոքսի մեջ պատահական հայտնվելու դեպքում սենյակային ջերմաստիճանի ջրով լվանում են ստամոքսը և առաջացնում փսխում, ապա տուժածին խմացնում են մի քանի բաժակ ջուր ադսորբենտի (10-15 հաբ մանրացված ակտիվացված ածուխ մեկ բաժակին) ավելացմամբ:
17. Մաշկի գրգռման դեպքում դադարեցնում են միջոցի կիրառումը:
18. Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

6. ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

19. Միջոցը փոխադրում են տրանսպորտային բոլոր տեսակի միջոցներով՝ բեռների փոխադրման կանոններին համապատասխան, որոնք գործում են տվյալ տեսակի տրանսպորտային միջոցների վրա՝ երաշխավորելով միջոցների և տարաների ապահովությունը:

20. Վթարային իրավիճակում, միջոցի մեծ քանակության պատահական արտահոսքի դեպքում թափված տեղում լցնում են ավազ, հող կամ սիլիկագել, ապա հավաքում են կափարիչով տարաների մեջ հետագա օգտահանման նպատակով: Աշխատանքի ընթացքում ձեռքերը պաշտպանում են ռետինե ձեռնոցներով, իսկ աչքերը՝ պաշտպանիչ ակնոցներով: Միջոցի մնացորդները լվանում են մեծ քանակության ջրով:

21. Միջոցը պահպանվում է փակ օդափոխվող պահեստային կառուցահատվածներում արտադրողի կողմից ամուր փակվող փաթեթավորմամբ՝ դեղամիջոցներից և սննդամթերքից առանձին, երեխաների համար անհասանելի վայրերում՝ -5°C -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, տաքացուցիչ սարքերից և արևի ուղիղ ճառագայթներից հեռու:

22. Արտաքին միջավայրի պաշտպանության միջոցառումներ՝ չի թույլատրվում չնոսրացված միջոցի թափանցումը մակերեսային և ստորգետնյա աղբյուրներ, կոյուղի:

23. Արտադրողի կողմից փաթեթավորված վիճակում միջոցի պահպանման ժամկետը (այդ թվում տարան բացելուց հետո) 5 տարի է՝ հերմետիկ փաթեթավորման և պահպանման պայմանների պահպանման դեպքում:

7. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

24. Որպես օգտագործման համար պատրաստի հեղուկ՝ որակի հսկման ցուցանիշները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Միջոցի որակի ցուցանիշներ

Ցուցանիշ	Նորմա
Արտաքին տեսք, գույն, հոտ	Կիսաթափանցիկ կամ թափանցիկ գելանման հեղուկ՝ անգույնից մինչև դեղին, առանց հոտի կամ բուրանյութի հոտով
ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	$6,0 \pm 1,0$
Տրիկլոզանի զանգվածային բաժին, %	$0,3 \pm 0,03$

25. Միջոցի արտաքին տեսքն ու գույնը որոշում են ակնադիտորեն, հոտը որոշում են օրգանոլեպտիկ մեթոդով՝ ըստ ԳՕՍՏ 29188.0-2014: Դրա համար 30-32 մմ ներքին տրամագծով անգույն ապակուց փորձանոթի մեջ մինչև կեսը լցնում են միջոցը և դիտում են արտացոլված կամ անցողիկ լույսի տակ:

26. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի որոշում, միջոցի pH որոշում:

1) Սարքավորումներ, նյութեր և ռեակտիվներ.

ա. ցանկացած մակնիշի pH-մետր՝ 0.1 չգերազանցող սխալանքով,

բ. 50 սմ³ տարողությամբ ապակե բաժակ՝ ըստ ԳՕՍՏ 25336-82:

2) Փորձարկման իրականացում՝ բաժակի մեջ լցնում են 30-40 սմ³ ծավալով միջոց և pH-մետրով չափում են pH՝ համաձայն հրահանգի:

27. Տրիկլոգանի զանգվածային բաժնի որոշում:

1) Սարքավորումներ, նյութեր և ռեակտիվներ.

ա. գազային քրոմատոգրաֆ զանգված-սելեկտիվ դետեկտորով (քրոմատոմասս-սպեկտրոմետր «Perkin Elmer TurboMass Autosystem XL»),

բ. կապիլյարային սյունակ PE-35MS (անշարժ ֆազա (5%դիֆենիլ) դիմերիլպոլիսիլօքսան)) 60 մ երկարությամբ, 0,25 մմ ներքին տրամագծով, 0,25 մկմ ֆազայի շերտի հաստությամբ,

գ. միկրոներարկիչ $1 \cdot 10^{-2}$ սմ³ (10 մկլ) տարողությամբ՝ $0.2 \cdot 10^{-3}$ սմ³ (0.2 մկլ) բաժանքի արժեքով,

դ. կրիչ գազ գազահեղուկային քրոմատոգրաֆիայի համար՝ «հատուկ մաքուր» («очы») ըստ ТУ 51-940-80,

ե. Տրիկլոգան

զ. 1,2-դիէթօքսիբենզոլ, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն՝ ներքին էտալոն,

է. իզոպրոպիլ սպիրտ, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն,

ը. ն-Հեքսան ըստ ТУ 6-09-4521-77, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն,

թ. Տետրահիդրոֆուրան ըստ ТУ 6-02-621-81, մաքրությունը որոշվում է քրոմատագրորեն;

ժ. լաբորատոր կշեռք՝ կշռման ± 2 մգ ճշգրտության «Sartorius BP-210S» տիպի

Թույլատրվում է կիրառել համանման տեխնիկական հատկանիշներով սարքավորումներ, ինչպես նաեւ ռեակտիվներ՝ նշվածից ոչ ցածր որակով:

28. Հետազոտության նախապատրաստում՝ ստուգաճշտման հարաբերական գործակցի (K) որոշման համար խառնուրդը պատրաստում են հետևյալ կերպ. 50 սմ³ տարողությամբ հղկված խցանով չափիչ կոլբայի մեջ լցնում են 0,1-0,2 գ տրիկլորան և 0,1-0,2 գ 1,2 դիէթօքսիբենզոլ (էտալոն): Կշռման արդյունքները գրամներով գրանցում են մինչև չորրորդ տասնորդական նիշը, այնուհետև լցված բաղադրիչներով կոլբայի մեջ ավելացնում են իզոպրոպիլ սպիրտ մինչև նիշը և խառնում:

29. Միջոցի հետազոտության համար նախապատրաստում են նմուշ: Դրա համար 50 մլ չափիչ կոլբայի մեջ տեղադրում են մոտավորապես 1գ միջոց, ավելացնում 10 մլ տետրահիդրոֆուրան և թափահարում փորձանոթը 5 րոպե, ապա նույն կոլբայի մեջ ավելացնում 20 մլ ն-հեքսան և թափահարում 5 րոպեի ընթացքում: Հեղուկների շերտավորումից հետո, տրիկլորան պարունակող ն-հեքսանի էքստրակտն օգտագործվում է տրիկլորանի զանգվածային բաժնի որոշման համար: Այդ նպատակի համար փորձանմուշը պատրաստվում է ն-հեքսանի էքստրակտի պարունակությամբ, համանման ձևով ավելացնելով հետազոտվող նմուշին 1,2-դիէթօքսիբենզոլ (էտալոն) որպես որոշվող բաղադրիչին հավասար օրինակ:

30. Հետազոտության իրականացում

ա. Քրոմատոգրաֆի աշխատանքի պայմանները.

Ինժեկտորի ջերմաստիճան՝ 260°C,

կրիչ գազի հոսքի արագություն՝ 1 մլ/րոպե

կալոնկայի թերմոստատի ջերմաստիճանի ծրագրավորում

իզոմետրիկ ռեժիմ 40°C 4 րոպեի ընթացքում

տաքացում մինչև 270°C 10°C/րոպե արագությամբ,

իզոմետրիկ ռեժիմ 270°C 4 րոպեի ընթացքում

նմուշի զանգված՝ 0,1 •10⁻³ – 0,3 •10⁻³ սմ³

նմուշի ներմուծումն առանց հոսքի բաժանման գազ կրիչի պահմամբ 0,5 րոպե:

բ. Դետեկտորի աշխատանքային պայմանները

իոնիզացիա՝ էլեկտրոնային հարված

սկանավորում՝ ընդհանուր իոնային հոսք

սկանավորվող զանգվածների միջակայք՝ 20 – 450 դալտոն,

կատողների և անալիզատորների միացման ժամանակահատվածը («պահում լուծիչի վրա») - նմուշի ներմուծումից 10 րոպե անց;

ինտերֆեյսի ջերմաստիճան՝ 290°C

աղբյուրի ջերմաստիճան՝ 210°C

լարումը ֆոտոբազմապատկչի վրա հաստատվում է ավտոմատ կերպով զանգված-դետեկտորի ստուգաճշտման ժամանակ:

31. Ստուգաճշտման գործակցի որոշման համար պատրաստում են երկու արհեստական խառնուրդ և յուրաքանչյուրը 10 անգամ ենթարկում քրոմատոգրաֆիայի: Փորձարկման իրականացման համար պատրաստում են երկու փորձանմուշ և յուրաքանչյուրը ենթարկում են քրոմատոգրաֆիայի 3 անգամ:

Արդյունքների մշակում՝ Տրիկլոզանի զանգվածային բաժինը (C) տոկոսներով «ներքին ստանդարտի (էտալոնի)» մեթոդով հաշվարկում են բանաձևով.

$$C = \frac{m_{\text{էտ}} \cdot S \cdot K}{m \cdot S_{\text{էտ}}} \cdot 100\% \quad , \text{ որտեղ}$$

m – հետազոտվող նմուշի զանգվածն է, գ,

$m_{\text{էտ}}$ – ներքին էտալոնի զանգվածը՝ հաշվի առնելով մաքրությունը, գ,

S – տրիկլոզանի գագաթի մակերես,

$S_{\text{էտ}}$ – ներքին էտալոնի գագաթի մակերես,

K – ստուգաչափման հարաբերական ցուցանիշ, որը հաշվարկվում է բանաձևով.

$$K = \frac{m_1 \cdot S_{\text{էտ}}}{S \cdot m_{\text{էտ}}}, \text{ որտեղ.}$$

m_1 – տրիկլոզանի զանգված, գ:

Հարաբերական ստուգաչափման գործակցի որոշման արդյունքների միջև թույլատրելի տարբերությունը չպետք է գերազանցի 0.2-ը:

32. Որպես վերջնական արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև թույլատրելի տարբերությունը չի գերազանցում 10%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4\%$ ՝ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում: